Արձանագրություն 2

«ՇՀԱՊՁԲ-15/4-ՁԻԱՀ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով դեղորայքի և պատվաստանյութերի գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման կասեցված նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 13 դեկտեմբերի 2016թ.
Անցկացման ժամը՝ 11:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հովհաննես Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լիանա Շախրամանյան Տիգրանուհի Խանաղյան Յուլյա Մանուկյան Հայկուհի Այվազյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

I. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(նախագահ՝ Հովհաննես Հակոբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	Հասցեները	էլ.հասցեն
1.	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ	ք. Երևան, Սարմենի 1/1, հեռ. 060-61-52-58	import@alfapharm.am
2.	«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ	ք. Արմավիր, Սայաթ-Նովա փ. 33 հեռ. 010-35-03-03	leykoalex@gmail.com

բ/ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ սույն ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շրջանակային համաձայնագիր կնքած մյուս կազմակերպությունները հայտ չեն ներկայացրել:

1.2 Հայտ պարունակող ծրարի կազմման և ներկայացման համապատասխանությունը հրավերով սահմանված կարգին.

Հանձնաժողովը որոշեց.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	համապատասխանում է/ չի համապատասխանում
1.	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ	համապատասխանում է
2.	«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ	համապատասխանում է

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.3 Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովը որոշեց.

N	Մասնակիցների անվանումները (անունները)	համապատասխանում է/ չի համապատասխանում
1.	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ	համապատասխանում է
2.	«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ	համապատասխանում է

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.4 N 18, N 19, N 23 և N 25 չափաբաժինների մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են տվյալ գնման առարկայի համար սահմանված նախահաշվային գինը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ. N 105-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը և հրավիրել «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին և «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ին միաժամանակյա բանակցությունների 16.12.2016թ. ժամը 11:00-ին՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, հասցեն՝ Աճառյան 2, N 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.5 Ընդունել ի գիտություն, որ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.01.2015թ. N 105-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերության պահանջները, հայտերի բացման կասեցված նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցելու է N 18, N 19, N 23 և N 25 չափաբաժինների համար բավարար գնահատված բոլոր մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

II. Բանակցությունների արդյունքների ամփոփման նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(նախագահ՝ Հովհաննես Հակոբյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

Բանակցությունների արդյունքների ամփոփման նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի անդամների կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի փաստաթղթերի գնահատման թերթիկները հանձնաժողովի քարտուղարին տրամադրելու օրը ժամը 14:00-ին՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, հասցեն՝ Աճառյան 2, N 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Հ.Հակոբյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Լ.Շախրամանյան	(ստորագրություն)
	Տ.Խանաղյան	(ստորագրություն)
	Յու.Մանուկյան	(ստորագրություն)
	Հ.Այվազյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Գ.Խանոյան	(ստորագրություն)